ՀԱՅ ՄԱՐՇԱԼՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՎՈԼՈԴՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանալի բառեր - Ինժեներական զորքեր, պատերազմ, ռազմաօդային, մարշալ, Կարմիր բանակ, Փառքի շքանշան, ավիացիա, ջրածնային ռումբ, ճակատամարտ:

ՆԱԽԱԲԱՆ

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ևս ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմին և իր արժանի ավանդը ներդրեց գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում: Պատերազմին մասնակցել է 600 000 հայ: Նրանցից ավելի քան 200 000-ը զոհվեց ռազմաճակատում: Հայերը ոչ միայն աչքի ընկան պատերազմի մասնակիցների քանակով, այլև մարտերում ցուցաբերած իրենց ռազմական տաղանդով ու կատարած սխրանքներով: Պատերազմին մասնակից հայ զինվորականներից Իվան Ստեփանի Իսակովին շնորհվեց Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում (հիշեցնենք, որ այդ կոչմանն արժանացել են ընդամենը 3 մարդ), Իվան Քրիստափորի Բաղրամյանին՝ Խորհրդային Միության մարշալի, Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին՝ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովին (Արմենակ Արտեմի Խանփերյանցին)՝ ավիացիայի մարշալի, իսկ Սերգեյ Քրիստափորի Ագանովին՝ ինժեներական զորքերի մարշալի կոչում:

1945թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով պատերազմին մասնակցել են 64 հայ գեներալներ, իսկ պատերազմի մասնակից հայ սպաներից ևս 83 հոգու շնորհվել է գեներալի, իսկ 8-ին՝ ծովակալի կոչում: Մարտերում իրենց կատարած սխրանքներով աչքի ընկած 99 հայորդու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Ընդհանուր առմամբ այդ բարձր կոչմանն են արժանացել 106 հայ, որոնցից՝ 4-ը 1939-1940թթ. խորհրդաֆիննական պատերազմում, իսկ 3-ը՝ հետպատերազմյան տարիներին: Ի. Ք. Բաղրամյանը և լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանը դարձել են Խորհրդային Միության կրկնակի հերոսներ: Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար 26 հայ ռազմիկներ պարգևատրվելով Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով

դարձել են այդ շքանշանի լրիվ ասպետ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին գիտության և արդյունաբերության բնագավառներում կատարած ակնառու ծառայությունների համար 8 հայորդու շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Պատերազմի մասնակից 3 հայ ականավոր գիտնականների՝ «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկային ծառայության գեներալ-գնդապետ Արտեմ Իվանի Միկոյանին հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Գրիգորի Քոչարյանցին և Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի անգամ: 1994թ. հոկտեմբերի 11-ին Վ. Հ. Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի Հանրապետության ազգային հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմի մասնակից Կիրիլ Իվանովիչ Շոլկինին (Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին՝ 1949, 1951 և 1958թթ.) շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում՝ միջուկային և ջրածնային ռումբի ստեղծման համար[1]: Այդ առումով էլ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցության թեման մշտապես եղել է հայ պատմագրության ուշադրության կենտրոնում: Հայ պատմաբանների ուշադրության կենտրոնում է եղել նաև պատերազմին մասնակցած հայ ականավոր զորավարների, Խորհրդային Միության մարշալներ՝ Իվան Քրիստափորի Բաղրամյանի, Իվան Ստեփանի Իսակովի,[2,] Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանի, Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովի (Արմենակ Արտեմի Խանփերյանցի)՝ Սերգեյ Քրիստափորի Ազանովի կյանքի ու գործունեության հիմնահարցը:

ԱՐՄԵՆԱԿ ԽԱՄՓԵՐՅԱՆՑ

Առաջին անգամ հայ պատմաբաններից նրա մասին հոդված է գրել պատմական գիտությունների թեկնածու Երվանդ Մկրտչի Խալեյանը՝ «Հայկական ԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի լրաբերի» 1958 թիվ 2-ի 75-77 էջերում[3]: 1963թ. լույս է տեսել լրագրող Արմո Մալխասյանի «Սովետական բանակի հայ զորձիչները»

---

[1] **Арутюняна К.** 2015, Участие сынов армянского народа в битве под Москвой. Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, с.19-22.

[2] **Գասպարյան Վ.** 2018, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» N 1, էջ 83-93:

[3] **Խալեյան Ե.** 1958, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» N 2, էջ 75-77: 1958, ՀԽՍՀ, ԳԱ «Լրաբեր» N2, էջ 75-77.

գիրքը, որի 215-219 էջերում տպագրված է «Ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակով» հոդվածը[1]:

1969թ. Բաքվում լույս է տեսել Ս.Ա.Կարապետյանի «Լեռնային երկրամասի խիզախ զավակները»[2] ժողովածուն, որի 7-8 էջերում ակնարկ է տպված ավիացիայի մարշալ Խուդյակով-Խանփերյանցի մասին: «Ճանապարհ դեպի երկինք» այսպես է վերնագրված գեներալ Ա.Վ.Ղազարյանի ակնարկը ավիացիայի մարշալ Խուդյակով-Խանփերյանցի մասին, որը տեղ է գտել նրա «Война, люди, судьбы» գրքի 1-ին հատորի 30-28 էջերում. գիրքը լույս է տեսել 1975թ. Երևանում:

1990թ. «Советский патриот» թերթի թիվ 42—12-րդ էջում լույս է տեսնում լրագրող Հայրո Սարկիսովի «Մարշալի երկու ազգանունը» հոդվածը, որտեղ հեղինակը փորձում է լուծել մարշալի երկու ազգանունների գաղտնիքը, բացահայտել Բերիայի դերը զորավարի կործանման գործում: 2002թ. ՀՀ պաշտպանության նախարարության հրատարակչությունը լույս է ընծայում զինվորական լրագրող, մայոր Վահան Մկրտչյանի «Մարշալ Խանփերյանց (Սերգեյ Խուդյակով)» գրքույկը բաղկացած 47 էջից (գրքի խմբագիրն էր պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը): Նույն թվականին «Հայկական բանակ» հանդեսում լույս է տեսնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկազ Հովհաննիսյանի հոդվածը նվիրված ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակով-Ա.Ա. Խանփերյանցի ծննդյան 100-ամյակին:

2004թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից լույս է տեսնում պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի «Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945гг.)» մենագրությունը, որի մի շարք էջերում (37,90,195-196) տրված են պատերազմի առաջին օրերի, Մոսկվայի և Կուրսկի ճակատամարտերի շրջանում ավիացիայի հայ զորավարի մարտական գործողությունների մի շարք դրվագներ: 2006թ. մարշալի ծննդյան 105-ամյակի առթիվ պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը ռուսերեն հրատարակում է «Маршал авиации С.А.Худяков - А.А.Ханферянц» մենագրությունը[3]: Աշխատությունը հիմնականում շարադրված է Ռուսաստանի Դաշնության պաշտպանութ-

---

[1] **Մալխասյան Ա.** 1963, «Սովետական բանակի հայ գործիչները» Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, էջ 215-219:

[2] **Կարապետյանի Ս.** 1969, «Լեռնային երկրամասի խիզախ զավակները» ժողովածու, Բաքու, Ադերբեջանական ՍՍՌ պետական հրատարակչություն, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, էջ 7-8:

[3] **Арутюнян К.** 2006, Арутюнян К. Маршал авиции С.А. Худяков – А.А. Ханферянц, Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 220с +32 с. илл.

յան նախարարության կենտրոնական, Ռուսաստանի ռազմական պետական, Ռուսաստանի Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի արխիվների նյութերի հիման վրա, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ էր դրվում առաջին անգամ: Աշխատության մեջ օգտագործված են նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվի, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմապատմական թանգարանի, համապատասխան գրականության և մամուլի նյութերը, մարշալի որդու՝ Սերգեյ Խուդյակովի հետ հեղինակի ունեցած զրույցները և այլն:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, վերջաբանից և հավելվածից: Առաջաբանի մեջ համառոտակի նշված է հայ ժողովրդի զավակների ներդրած ավանդը Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում, նշված են Արմենակ Խանփերյանցի հերոսական և ողբերգական կյանքի դրվագները, տրված է օգտագործված աղբյուրների տեսությունը:

Առաջին գլուխը, որը կրում է «Նախապատերազմական տարիներին» վերնագիրը, բաղկացած է 3 ենթաբաժիններից: Առաջին ենթաբաժնում լուսաբանվել է ապագա մարշալի ծննդյան, ուսման, աշխատանքային գործունեության և Կարմիր բանակում ծառայության հետ կապված հարցերը: Երկրորդ ենթաբաժնում լուսաբանված է Ուկրաինայում հեծելազորային զորամասերում Խուդյակով-Խանփերյանցի ծառայությունը, երրորդում՝ նրա ուսումնառությունը ռազմաօդային ակադեմիայում և ավիացիայի հրամանատարի ծառայությունը պատերազմի նախօրյակին: «Հայրենական մեծ պատերազմի գլխավոր ճակատամարտերում» վերնագիրն է կրում աշխատության երկրորդ գլուխը, որտեղ ցույց են տրված պատերազմի առաջին օրերին, Արևմտյան ռազմաճակատում, 1-ին օդային բանակի հրամանատար և Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետի պաշտոնում Խուդյակով-Խանփերյանցի գործունեությունը: Երրորդ գլուխը վերաբերում է պատերազմի ավարատական փուլում Հեռավոր Արևելքում ավիացիայի մարշալ Խուդյակով-Խանփերյանցի գործունեությանը: Չորրորդ գլուխը կրում է «Մարշալի ճակատագիրը» վերնագիրը: Վերջաբանում ի մի են բերված հետազոտության արդյունքները: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում չորս հավելվածները, որտեղ զետեղված են արխիվային փաստաթղթեր, հոդվածներ մարշալի ճակատագրի մասին, մարշալի «Օդում տարած հաղթանակների վճռական տարին» հոդվածը:

2008թ. պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը «Маршал авиации С.А Худяков-А.А.Ханферянц» մենագրությու-

նը հրատարակվեց երկրորդ անգամ լրացումներով ու նոր մշակումներով[1]: Գրքի բովանդակությունը նույնն էր, բայց այն լրացված էր նոր փաստերով, որոնք հեղինակը հայտնաբերել էր Ռուսաստանի Դաշնության ֆեդերալ ծառայության բյուրոյի կենտրոնական արխիվում: Հարկ ենք համարում նշել, որ մինչ այդ Հայաստանի հանրապետության պատմաբաններից ոչ մեկը չէր աշխատել այդ արխիվում: Կ.Ա.Հարությունյանը ոչ միայն այդ նյութերը օգտագործել է աշխատությունը շարադրելիս, այլև դրանք նույնությամբ տեղադրել գրքի հավելվածի 122-153 էջերում (թիվ 12-23 , 27,29 փաստաթղթեր): Այդ նյութերից հատկապես հիշատակելի է թիվ 13 փաստաթուղթը, որը 1946թ. փետրվարի 19-ին մարշալի հարցաքննության արձանագրությունն է, որտեղ պարզվում է, որ Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովի իսկական անուն, ազգանունն Արմենակ Արտեմի Խանփերյանց է, թիվ 22 փաստաթուղթը, որը Ս.Ա.Խուդյակով-Ա.Ա.Խանփերյանցի գնդակահարելու մասին դատավճիռն է 1950թ. ապրիլի 18-ին և թիվ 23 փաստաթուղթը՝ մարշալի մահապատիժն ի կատար ածելու մասին տրված տեղեկանքը, ինչպես նաև մարշալին արդարացնելու մասին ԽՍՀՄ գերագույն դատարանի որոշումը՝ ավիացիայի մարշալ Ս.Ա.Խուդյակով-Ա.Ա.Խանփերյանցին արդարացնելու մասին (փաստաթուղթ N29, 18 օգոստոսի 1954թ.):

ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Գրեթե նույն չափով հայ պատմագրությունը ուսումնասիրել է նաև Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանի կյանքն ու գործունեությունը: Դեռևս 1963թ. զինվորական լրագրող Արմո Մալխասյանը տպագրել էր իր «Սովետական բանակի հայ գործիչները» աշխատությունը, որի 220-231 էջերում զետեղել էր «Գեներալ-գնդապետ Համազասպ Բաբաջանյան» ակնարկը, որտեղ առաջին անգամ հայ իրականության մեջ տալիս է անվանի զորավարի համառոտ կենսագրությունը: Մեկ տարի անց ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը հրատարակում է «2006թ. ՀՀ պաշտպանության նախարարության լրատվական վարչությունը «Զինվորի գրադարան» մատենաշարով հրատարակում է մայոր Վահան Մկրտչյանի «Մարշալ Համազասպ Բաբաջանյան» փոքրաչափ գրքույկը (63 էջ, չափսը՝ 10x14սմ): Վերոհիշյալ բոլոր հեղինակներն էլ ի-

[1] **Арутюнян К.** 2008, Маршал авиации С. А. Худяков -А.А. Ханферянц (второе, дополненное издание), Ереван, Изд. «Зангак» 252с.+36 с.илл.

րենց ընձեռնված հնարավորությունների սահմաններում համառոտ լուսաբանել են խիզախ զորավարի կենսագրությունը:

2009թ. պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը ռուսերեն հրատարակել է «Главный маршал бронетанковых войск А.Х. Бабаджанян» մենագրությունը[1]: Հեղինակը աշխատությունը գրելիս օգտագործել է Ռուսաստանի պետական ռազմական արխիվի (ք. Մոսկվա), ՌԴ պաշպանության նախարարության կենտրոնական արխիվի (Մոսկվայի մարզ ք.Պոդոլսկ), Ռուսաստանի պետական գրադարանի ռազմական գրականության բաժնի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվի, ՀՀ պաշտպանության նախարարաության «Մայր Հայաստան» ռազմապատմական թանգարանի, ՀՀ Ազգային արխիվի նյութերը, համապատասխան գրականություն, թերթեր և հանդեսներ: Գրքում զետեղված լուսանկարների զգալի մասը հեղինակին է հանձնել մարշալի ավագ դուստրը՝ Լարիսան: Գիրքը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, վերջաբանից, հավելվածից և անգլերեն ու գերմաներեն համառոտ ամփոփումից: Առաջին գլուխը, որի վերնագիրն է՝ «Նախապատերազմյան տարիներին», բաղկացած է երկու՝ «Ծնունդը, ընտանիքը, պատանեկությունը և ուսումը» և «Նախապատերազմյան ծառայությունը» ենթաբաժիններից: Երկրորդ գլուխը կոչվում է՝ «Հայրենական մեծ պատերազմի առաջին փուլը»: Այն նույնպես բաղկացած է երկու ենթաբաժիններից, որից առաջինը կրում է՝ «Արևմտյան և հարավարևմտյան ուղղություններում», իսկ երկրորդը՝ «Տանկիստի ձևավորումը» վերնագիրը: Երրորդ գլխի վերնագիրն է՝ «Պատերազմի երկրորդ փուլում»: Այն բաղկացած է երեք ենթաբաժիններից. 1.«1-ին տանկային բանակի կազմավորումը», 2. «Կուրսկի աղեղում» և 3. «Ձախափնյա Ուկրաինայում»: Չորրորդ գլուխը, որի վերնագիրն է՝ «Պատերազմի երրորդ՝ ավարտական փուլում», բաղկացած է նույնպես երեք ենթաբաժիններից. 1.«Աջափնյա և Արևմտյան Ուկրաինայի ազատագրման մարտերում», 2. «Լեհաստանի ազատագրման մարտերում», 3. «Բեռլինյան հարձակողական գործողություններում (16 ապրիլի-8 մայիսի 1945թ)»: Հինգերորդ գլխում լուսաբանված են զորավարի կյանքն ու գործունեությունը հետպատերազմյան տարիներին, իսկ վերջաբանում հանրագումարի են բերված ուսումնահիրության արդյունքները:

Արժեքավոր փաստերով հարուստ հավելվածի թիվ 1-ում տրված են Հ. Խ. Բաբաջանյանի հոդվածներն ու հարցազրույցները տպագրված մամուլում: Երկրորդ հավելվածում տեղ են գտել զորավարի մասին գրված

[1] **Арутюнян К.** 2009, Главный маршал бронетанковых войск А.Х. Бабаджанян, Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 260с. +32с. илл.

հոդվածները, իսկ երրորդ հավելվածում տպագրված է հատված մարշալի դստեր Լարիսա Համազասպովնայի «Улыбка детства» անտիպ վիպակից: Գրքին առանձին արժեք են հաղորդում և ընդլայնում ընթերցողների քանակը 250-256 էջերում անգլերեն և գերմաներեն տրված ամփոփումները:

ՍԵՐԳԵՅ ԱԳԱՆՈՎ

Հայ պատմագրության մեջ միանգամայն նորություն է Կլիմենտ Հարությունյանի «Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов» մենագրությունը[1], որտեղ ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի տվյալների հիման վրա ռուսերեն առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվել է խորհրդաֆիննական և Հայրենական մեծ պատերազմների ակտիվ մասնակից, հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ Զինված ուժերի ամրապնդման գործում իր արժանի ավանդը ներդրած հայազգի մարշալի կյանքն ու գործունեությունը: Մինչ այդ Կ.Ա. Հարությունյանը զորավարի մասին համառոտակի անդրադարձել էր իր՝ «Հայ ռազմիկների մասնակցությունը խորհրդա-ֆիննական պատերազմին (30.11.1939-13.03.1940)»[2] աշխատության 90-95 էջերում, «Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда» մենագրության 60-63 էջերում, «Հայ զինվոր» թերթի 2007թ. հունիսի 2-9-ի թիվ 2 համարի 10-րդ էջում, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 2008թ. թիվ 1-ի 264-267 էջերում տպագրած «Ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Քրիստափորի Ագանով» հոդվածում, 2010թ. Հ. Ռ.Պողոսյանի հետ համատեղ հրատարակած «Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941-1945)» մեծածավալ աշխատության 341-342 և 571-572 էջերում: Ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Ագանովի մասին 2012թ. Կլիմենտ Հարությունյանի հրատարակած գիրքը բաղկացած է առաջաբանից, 3 գլուխներից, վերջաբանից և ընդարձակ հավելվածից: Գրքում լուսաբանված են Սերգեյ Ագանովի նախապատերազմյան տարիները, ընտանիքը, պատանեկությունը, ուսումը, կամավոր կերպով Կարմիր բանակի շարքերում ընդգրկվելը, խորհրդա-ֆիննական պատերազմին մասնակցությունը: Այնուհետև լուսաբանված է

---

[1] **Арутюнян К**. 2012, Маршал инженерных войск Сергей Христофорович Аганов, Ереван, Изд. Института истории НАН РА, 142с.

[2] **Հարությունյան Կ.** 2008, Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին (30.11.1939 – 13.03.1940), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 228 էջ, 57 լուսանկար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին սակրային և ինժեներական զորքերում արհեստավարժ մասնագետի մասնակցությունը Լենինգրադի հերոսական պաշտպանությանը, ապա նրա ծառայությունը Կարմիր բանակի ինժեներական զորքերի շտաբում և հետպատերազմյան գործունեությունը: Հավելվածում տեղ են գտել Սերգեյ Ագանովի գրած հոդվածները տպագրված «Военно-исторический журнал»-ում և Կ.Ա. Հարությունյանի «Ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Քրիստափորի Ագանով» հոդվածը տպագրված ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում:

Հիշեցնենք, որ հայ իրականության մեջ, ինժեներական զորքերի մարշալ Ս.Ք.Ագանովի մասին 1998թ. «Հայ զինվոր» թերթում. (թիվ 13) և 2002թ. «Հայկական բանակ» հանդեսում (թիվ 1-2) հոդվածներ է տպագրել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի ռազմական ակադեմիայի ակադեմիկոս, գնդապետ Արկադի Երեմի Սարգսյանը: 2005թ. նա ռուսերեն ակնարկ է տպագրել նաև իր գրքում[1]: Նույն թվականին «Голос Армении» թերթում գնդապետ Ռուբեն Բախշյանը տպագրել է «Еще раз о маршале Аганове» հոդվածը (16 հունիսի, թիվ 75,էջ 7):

Մարշալի մասին համառոտ տեղեկանք է տպված նաև «Ով ով է. Հայեր» կենսագրական հանրագիտարանում (Ե., 2005, էջ 25):

Այսպիսով, ամփոփելով Հայրենական մեծ պատերազմի մասնակից հայ ականավոր զորավարներ՝ ավիացիայի մարշալ Արմենակ Խամփերյանցի, Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս Համազասպ Բաբաջանյանի և ինժերական զորքերի մարշալ Սերգեյ Ագանովի կյանքի ու գործունեության լուսաբանումը հայ պատմագրության մեջ մեր ուսումնասիրությունը, հանգում ենք այն եզրակացության, որ հայ պատմաբանները առ այսօր արժանին են մատուցել իրենց հայրենակից զորավարներին՝ նրանց մասին տպագրելով առանձին հոդվածեր և մենագրություններ: Դրա հետ մեկտեղ հայ պատմագրությունը դեռևս անելիքներ ունի կատարելու այս բնագավառում: Հարկավոր է մարշալներ Համազասպ Բաբաջանյանի, Սերգեյ Խուդյակով- Արմենակ Խանփերյանցի և Սերգեյ Ագանովի մասին եղած ռուսերեն գրքերը թարգմանել հայերեն և դրանք մատչելի դարձնել

[1] **Саркисян А.** 2005, Армяне-военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века, т. Ереван, Изд. «Амарас», с.358-360.

հայ ընթերցողի համար: Այդ աշխատանքը մեծ չափով կնպաստի մատաղ սերնդի, հատկապես ՀՀ զինուժի և Արցախի հանրապետության պաշտպանության բանակի հերոսական մարտական ավանդույթների ոգով դաստիարակելու գործին:

Володя Гаспарян, Жизнь и деятельность армянских маршалов в армянской историографии - До сих пор Армянские историки сделали благодарная работа в своих работах, представляя жизнь и деятельность активному участнику Великой Отечественной войны 1941-1945 годов маршалу Сергею Худякову - Арменак Ханперянцу, маршала бронетанковых войск, героя Советского Союза Амазаспа Бабаджаняна и маршала инженерных войск Сергея Аганова. Особенно, Доктор Климент Амасия Арутюнян, доктор исторических наук, проделал значительную работу в этой области. Он опубликовал отдельные монографии на русском языке о вышеупомянутых 3 маршалах.

Доктор исторических наук Арамаис Мнацаканян, кандидат исторических наук Ерванд Халеян и другие рассказали о знаменитых армянских командирах в отдельных главах и книгах. В то же время армянская историография еще имеет много дел в этой области.

Желательно перевести книги на армянском языке, написанные о маршалах Амазаспе Бабаджаняне, Арменаке Ханпераранце и Сергее Аганове и опубликовать их. Также, желательно опубликовать сборник документов и материалов по их жизни и деятельности или опубликовать отдельную книгу обо всех маршалах Армении, участвовавших в Великой Отечественной войне. Все это в значительной мере способствовало бы воспитанию молодого поколения в духе героических военных традиций, особенно Вооруженных сил Республики Армения и Армии обороны Арцаха.

Volodya Gasparyan, The explanation of the life and activity of armenian marshals in armenian history - Up to now, Armenian historicans have done a greatful work by highlighting in their writtings the life and activities of Sergei Khudyakov - Armenak Khanperyants, the active participant of the Great Patriotic War 1941-1945, Marshal of the Armed Forces and hero of the Soviet Union Hamazasp Babajanyan and Marshal of Engineering Troops Sergey Aganov. Espeially Dr. Kliment Amasia Harutyunyan, who has made considerable work in that field and published separate monographs in Russian about the above mentioned 3 marshals.

Armenian historicans Doctor of Historical sciences Aramayis Mnatsakanyan, Candidate of Historical Sciences Yervand Khaleyan and others spoke

about the famous Armenian commanders in relevent sections and/or separate chapters of the books. At the same time, Armenian historiography still has a lot to do in that area.

It is preferable to translate books into Armenian written about Marshal Hamazasp Babajanyan, Armenak Khanperaryants and Sergey Aganov and publish them in Armenian. It is also desirable to publish a collection of documents and materials about their lives and activities, or publish a separate book about all Armenian Marshals who participated in the Great Patriotic War. All this will greatly contribute to the heroic upbringing of the younger generation, especially the Armed Forces of the Republic of Armenia and the Defense Army of Artsakh Republic.

Ուղարկվել է խմբագրություն 01.11.2022թ.
Գրախոսվել է 02.11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 04.11.2022թ.